

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 35/7

8 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «ՎԻԼՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի 04.08.2015 թ-ի գրությամբ բերված գանգատը 2015 թ-ի փետրվար ամսվա համար լրացուցիչ հաշվարկված հաստատագրված վճարի գումարը վերանայելու վերաբերյալ:

«ՎԻԼՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի գանգատում բերված փաստարկները.

Սույն թվականի հունվարի 30-ին հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի միջոցով «ՎԻԼՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև ընկերություն) բեռնափոխադրման աշխատանքների հետ կապված ուղարկվել է դիմում-հայտարարություն՝ հաստատագրված վճար վճարողի գործունեության ժամանակավոր դադարեցման վերաբերյալ, որտեղ նշվել է գործունեության դադարեցման սկիզբը 01.02.2015 թ., ավարտը՝ 28.02.2015 թ., իսկ գործունեության դադարեցման սկիզբը ներառող ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրերի քանակը՝ թյուրիմացաբար նշվել է 20, 0-ի փոխարեն:

12.02.2015 թ-ին ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ-ից ստացվել է արձանագրություն, որի համաձայն դիմում-հայտարարության 5-րդ կետում գործունեության դադարեցման սկիզբը նշվել է 01.02.2015 թ., ավարտը 28.02.2015 թ., սակայն քանի որ 6-րդ կետում նշվել է 20 օր, ամբողջ փետրվար ամսվա համար հաշվարկվելու է հաստատագրված վճար՝ գումարով 446.500 դրամ: Համաձայն արձանագրության, առաջարկվել է ներկայացնել հաստատագրված վճար վճարողի գործունեության ժամանակավոր դադարեցման վերաբերյալ ճշտված դիմում-հայտարարություն: Նույն օրը՝ 12.02.2015 թ-ին, հարկային տեսչություն է ներկայացվել դիմում-հայտարարություն՝ ճիշտ ձևով, նկատի ունենալով, որ կշտկվի առկա թյուրիմացությունը, մանավանդ, որ էլեկտրոնային համակարգի տեղեկատվական բազայում ընկերության կարգավիճակը նույնպես նշված էր որպես դադարեցված գործունեություն: Պարզ երևում է, որ վերոգրյալ դիմում-հայտարարության 5-րդ և 6-րդ կետերի նշումների միջև առկա է հակասություն՝ կապված տեխնիկական սխալի հետ: Հարկային տեսչության աշխատակիցները չեն ընդունել փաստաթղթերը, առաջարկել են գրավոր ներկայացնել իրավիճակը և սպասել պատասխանին:

13.02.2015 թ-ին հարկային տեսչություն ներկայացվել է դիմում, որտեղ մանրամասն նշվել է տեղի ունեցած թյուրիմացության մասին, ինչպես նաև խնդրվել է ներկայացնել ճիշտ դիմում-հայտարարություն:

Չստանալով գրավոր պատասխան ընկերությունը կարծել է, որ խնդիրը լուծվել է: Սակայն, 29.06.2015 թ-ին (ավելի քան 4 ամիս հետո) Արաբկիրի ՀՏ-ից ստացվել է գրավոր պատասխան, որի համաձայն հարկ վճարողը ճշտված դիմում-հայտարարություն չի կարող ներկայացնել:

Ընկերությունը կրկին դիմել է տեսչության տվյալների վերլուծության բաժին վերոգրյալ հարցը կարգավորելու նպատակով, սակայն ստացել է բացասական պատասխան:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է հարցին տալ դրական լուծում:

«Հ Հ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը».

«Հ Հ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ սույն թվականի հունվարի 30-ին հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի միջոցով «ՎԻԼՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է դիմում-հայտարարություն հաստատագրված վճար վճարողի գործունեության ժամանակավոր դադարեցման վերաբերյալ: Դիմում-հայտարարությունում գործունեության դադարեցման սկիզբը նշվել է 01.02.2015 թ-ը, իսկ ավարտը՝ 28.02.2015 թ.: Միևնույն ժամանակ, նշված դիմում-հայտարարությունում գործունեության դադարեցման ժամանակահատվածում գործունեության իրականացման օրերի քանակն ընդամենը 0 նշվելու փոխարեն թյուրիմացաբար նշվել է 20: Նշված հանգամանքը հիմք է հանդիսացել Արաբկիրի ՀՏ կողմից փետրվար ամսվա համար լրացուցիչ հաստատագրված վճար հաշվարկելու համար:

Քննարկվող դեպքում հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ընկերության կողմից ներկայացված հաստատագրված վճար վճարողի գործունեության ժամանակավոր դադարեցման վերաբերյալ դիմում-հայտարարությունում 01.02.2015 թ-ից մինչև 28.02.2015թ. ընկած ժամանակահատվածում գործունեության իրականացման օրերի քանակը սխալ է նշվել թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են: Մասնավորապես, ընկերության կողմից 01.02.2015 թ-ից մինչև 28.02.2015թ. գործունեություն չիրականացնելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու պայմաններում աշխատած օրերի ընդհանուր թիվը չի կարող 20 լինել: Բացի այդ, հարկային տեսչության կողմից չի արձանագրվել նշված ժամանակահատվածում ընկերության կողմից գործունեություն իրականացվելու որևէ փաստ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով, Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության կողմից 2015 թ-ի փետրվար ամսվա համար ներկայացված դիմում-հայտարարությունում տեղ գտած մեխանիկական սխալը չի կարող հիմք հանդիսանալ ընկերության նկատմամբ հաստատագրված վճարի գծով լրացուցիչ պարտավորությունների հաշվարկման համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

«ՎԻԼՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի 04.08.2015 թ-ի գրությամբ բերված գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

